CYFEST 15 International Media Art Festival Curatorial Concept Announced: Vulnerability.

CYFEST announces the curatorial concept for their 15th edition of the festival entitled *Vulnerability*. The 15th edition of the CYFEST will focus on imagining new perspectives regarding the ostensible (anti)fragility of human and non-human body, bio and cyber environments, histories and futures, encounters and relationships with the world in transition.

Vulnerability

Concept of the International Media Art Festival CYFEST-15

Every man, every woman, every living creature is vulnerable. Nobody lives forever. Ever since the origin of human civilization, gods, demigods and heroes discovered one or more elements of vulnerability in them: in their body, history, encounters or relationship with the outside world. Now it becomes clear: it is not important what kind of global catastrophe could happen — ecological, anthropogenic, political, military or biological. Suddenly, everybody has seen how vulnerable their habitual existence is and that the world of well-being, promised by the Fourth Industrial Revolution, is an illusion that gets dissipated in an instant and that it gets replaced by chaos and suffering for no apparent reason.

Vulnerability is a natural quality of any human being. What's paradoxical is that it is precisely on this that the self-awareness and personal dignity of a human being seem to be based. Acknowledgement of one's own vulnerability makes us truly stronger. The expression of one's desires, reevaluation of personal boundaries and questioning are actions that entail a certain risk, but,

at the same time, help to overcome the fear of being rejected or misunderstood. They prepare us for submerging into entropy without fear, but also without superfluous hope, and for meeting destruction face to face. By recognizing our vulnerability, we also discover the empathic ability in ourselves – this is what feeds our ethic responsibility towards the others, society and environment.

However, vulnerability and fragility are not always the same thing. In 2012, Professor Nassim Nicholas Taleb introduced the notion of antifragility into the world discourse. This concept presumes that the antifragile, having gone through trials and tribulations, becomes better than before. That is to say, a certain portion of risk does such systems (and the human being is one of them) good. If they are fragile — chance events destroy them. However, if they are antifragile – errors and damages make them stronger and better. This is the world's fundamental quality, using which one could achieve tremendous successes.

Our present renounces compassion and responsibility in totally different forms than our past because the very notion of vulnerability has acquired new dimensions. In the posthuman age, in which anatomy, unlike it was maintained by Freud, is no longer destiny; we measure ourselves in the juxtaposition of two poles: Bio and Cyber. Of course, these poles reflect the schism in human nature between the "legacy of primeval dirt of the bodies" and the projection into a higher sphere of the spiritual, in which the flesh — an ephemeral material — will be sublimated by the unsubstantiated nature of information. However, the comparison of reason and computer, as the software of body and machine, while reflecting the Cartesian dualism of reason-body, still acquires a new resonance.

It appears that only art, as the pinnacle of manifestation of the “civilized reason”, is capable of accumulating universal problems and constantly holding them in its attention field. Contemporary artists explore the “territories” that previously were not included into their area of interest: preservation of nature, social stability, self-identification, scientific research, medicine, artificial intelligence, politics and so forth. Above all, they explore not the disciplines themselves, but what’s going on with human beings and how they change the world around them, first and foremost, from the ethic point of view. Art can truly illuminate global matters, offer an unending comprehension of the common path and delineate an unexpected glance at the familiar world and to console with compassion and hope. It can inspire the creation of antifragile signs, upon which one could built a different future.

Vulnerability can be a truly positive force, as a counterbalance to obsessions of safety that we experience every day and that could not be guaranteed at any level.

This is, in fact, a stable and firmest foundation that is capable of withstanding any traumatic situations. As for whether or not yet another lesson would be learned — time, of course, will tell, though there is not much hope for this. Human tendency to regain one’s own comfort at any cost frequently pushes aside the critical evaluation of reality.

Silvia Burini

Elena Gubanova

CYFEST 15 Միջազգային մեդիա արվեստի փառատոնի համադրողական հայեցակարգը հայտարարվեց՝ Խոցելիություն

CYFEST-ը հայտարարում է փառատոնի 15-րդ թողարկման հայեցակարգը, որի անվանումն է «Խոցելիություն»: CYFEST-ի 15-րդ թողարկումը կկենտրոնանա նոր հեռանկարների պատկերացման վրա՝ կապված մարդկային և ոչ մարդկային մարմնի թվացյալ (հակա) փխրունության, բիո և կիբեր միջավայրերի, պատմության և ապագայի, անցումային շրջանի աշխարհի հետ հանդիպումների և հարաբերությունների հետ:

Խոցելիություն

CYFEST-15 մեդիա արվեստի միջազգային փառատոնի հայեցակարգ

Յուրաքանչյուր տղամարդ, յուրաքանչյուր կին, յուրաքանչյուր կենդանի արարած խոցելի է: Ոչ ոք հավերժ չի ապրում: Մարդկային քաղաքակրթության սկզբից ի վեր աստվածները, կիսաստվածները և հերոսներն իրենց մեջ հայտնաբերել են խոցելիության մեկ կամ մի քանի տարրեր՝ իրենց մարմնում, պատմության մեջ, հանդիպումներում կամ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում: Հիմա արդեն պարզ է, որ կարևոր չէ, թե ինչպիսի գլոբալ աղետ կարող է լինել՝ էկոլոգիական, մարդածին, քաղաքական, ռազմական, թե կենսաբանական: Հանկարծ բոլորը տեսան, թե որքան խոցելի է իրենց սովորական գոյությունը, և որ Չորրորդ արդյունաբերական հեղափոխության կողմից խոստացված բարեկեցության աշխարհը պատրանք է, որը մի ակնթարթում ցրվում է, և որ այն փոխարինվում է քաոսով և տառապանքով՝ առանց որևէ ակնհայտ պատճառի:

Խոցելիությունը ցանկացած մարդու բնական հատկությունն է: Պարադոքսալն այն է, որ հենց դրա վրա է կարծես հիմնված մարդու ինքնագիտակցությունը և անձնական արժանապատվությունը: Սեփական խոցելիության ճանաչումը մեզ իսկապես ավելի ուժեղ է դարձնում: Սեփական ցանկությունների արտահայտումը, անձնական սահմանների վերագնահատումը և հարցադրումը գործողություններ են, որոնք իրենց մեջ պարունակում են որոշակի ռիսկ, բայց միևնույն ժամանակ օգնում են հաղթահարել մերժված լինելու կամ չհասկացված լինելու վախը: Նրանք մեզ պատրաստում են առանց վախի, բայց նաև առանց ավելորդ հույսի էնտրոպիայի մեջ ընկղմվելուն, և դեմ առ դեմ ավերածություններին հանդիպելուն: Ճանաչելով մեր խոցելիությունը, մենք նաև բացահայտում ենք մեր մեջ կարեկցանքի կարողությունը: Սա այն է, ինչ լիարժեք է դարձնում մեր էթիկական պատասխանատվությունը ուրիշների, հասարակության և շրջակա միջավայրի հանդեպ:

Այնուամենայնիվ, խոցելիությունն ու փխրունությունը միշտ չէ, որ նույն բանն են: 2012 թվականին պրոֆեսոր Նասիմ Նիկոլաս Թալեբը համաշխարհային դիսկուրս մտցրեց հակափխրունության գաղափարը: Այս հայեցակարգը ենթադրում է, որ հակափխրունը, անցնելով փորձությունների և փորձառությունների միջով, դառնում է ավելի որակյալ, քան նախկինում: Ասել է թե՝ ռիսկի որոշակի մասը նման համակարգերին օգտակար է (և մարդ արարածը դրանցից մեկն է): Եթե դրանք փխրուն են, պատահական իրադարձությունները ոչնչացնում են նրանց: Այնուամենայնիվ, եթե դրանք հակափխրուն են, ապա սխալներն ու վնասները դրանք դարձնում են ավելի ուժեղ և ավելի լավ: Սա է աշխարհի հիմնարար որակը, որի միջոցով կարելի է հասնել մեծ հաջողությունների:

Մեր ներկան մերժում է կարեկցանքն ու պատասխանատվությունը բոլորովին այլ ձևերով, քան անում էր մեր անցյալը, քանի որ խոցելիության գաղափարը նոր չափումներ է ստացել: Հետմարդկային դարաշրջանում, երբ անատոմիան, ի տարբերություն Ֆրեյդի պնդման, այլևս ճակատագիր չէ, մենք մեզ չափում ենք երկու բևեռների՝ Bio-ի և Cyber-ի համադրությամբ: Իհարկե, այս բևեռները արտացոլում են մարդկային բնության մեջ առկա բաժանումը «մարմինների սկզբնական կեղտոտվածության ժառանգության» և հոգևորի ավելի բարձր ոլորտի պրոյեկցիայի միջև, որտեղ մարմինը՝ այդ անցողիկ նյութը, կսուբլիմացվի տեղեկատվության չհիմնավորված լինելու պատճառով: Այնուամենայնիվ, բանականության և համակարգչի համեմատությունը՝ որպես մարմնի և մեքենայի ծրագրակազմ, արտացոլելով բանական-մարմնի դեկարտյան դուալիզմը, նոր հնչեղություն է ստանում:

Պարզվում է, որ միայն արվեստը, որպես «քաղաքակիրթ բանականության» դրսևորման գագաթնակետ, կարող է կուտակել համամարդկային խնդիրներ և դրանք մշտապես պահել իր ուշադրության դաշտում: Ժամանակակից արվեստագետներն ուսումնասիրում են այն «տարածքները», որոնք նախկինում ներառված չէին իրենց հետաքրքրության ոլորտում՝ բնության պահպանում, սոցիալական կայունություն, ինքնորոշում, գիտական հետազոտություն, բժշկություն, արհեստական ինտելեկտ, քաղաքականություն և այլն: Նրանք նախ և առաջ ուսումնասիրում են ոչ թե այդ ճյուղերը, այլ այն, թե ինչ է կատարվում մարդկանց հետ և ինչպես են նրանք փոխում իրենց շրջապատող աշխարհը, առաջին հերթին, էթնիկ տեսանկյունից: Արվեստը կարող է իսկապես լուսավորել գլոբալ խնդիրները, առաջարկել ընդհանուր ուղու անվերջանալի ըմբռնում և ուրվագծել անսպասելի

հայացք դեպի ծանոթ աշխարհը, մխիթարել կարեկցանքով և հույսով: Այն կարող է ոգեշնչել հակափխրուն նշանների ստեղծումը, որոնց վրա կարելի է կառուցել տարբերվող ապագա:

Խոցելիությունը կարող է իսկապես դրական ուժ լինել՝ որպես հակակշիռ անվտանգության մոլուցքներին, որոնք մենք ամեն օր զգում ենք, և որը չի կարող երաշխավորվել որևէ մակարդակում:

Այս թվացյալ փխրունությունը, ըստ էության, կայուն և ամենաամուր հիմքն է, որն ունակ է դիմակայել ցանկացած տրավմատիկ իրավիճակի: Ինչ վերաբերում է ևս մեկ դաս քաղելուն. ժամանակը, իհարկե, ցույց կտա, թեև շատ մեծ հույսեր չկան: Ցանկացած գնով սեփական հարմարավետությունը վերականգնելու մարդկային հակումը հաճախ մի կողմ է մղում իրականության քննադատական գնահատումը:

Սիլվիա Բուրինի
Ելենա Գուբանովա